ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱԶԱԿՑՈՒՄ Է «ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՔՈՒՅՐԵՐ» ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻՆ

02.12.2022 16:59

Հարգելի՛ փաստաբաններ,

Շարունակելով մեր ավանդույթը՝ ցանկանում ենք 2022թ. դեկտեմբերի 23-ին՝ ժամը 17:00-ին, այցելել Երևանում «Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատուն, որտեղ խնամքի տակ են գտնվում ծանր հիվանդ երեխաներ, որոնցից ծնողները հրաժարվել են:

Մանկատան երեխաներին օգնություն տրամադրելու, ինչպես նաև նրանց անձամբ այցելելու ցանկություն հայտնած անձինք կարող են info@advocates.am էլ. հասցեին նամակ ուղարկել կամ անհրաժեշտ իրը ստացականով հանձնել Փաստաբանների պալատի ընդունարանի պատասխանատուին:

Մանկատան երեխաներին անհրաժեշտ են հետևյալ իրերը՝ (անսահմանափակ քանակի)

- բամբակյա ներքնազգեստ (7-9 տարեկանի),
- լոգանքի պարագաներ (գել, օճառ...) - Johnson’s Baby,
- լվացքի գել
- կրեմ - Topi
- կաթնային խառնուրդ - Similac 1, 2,
- BEBI շիլաներ (կաաա),
- Huggies, Libero, Puffies տակդիրներ (ցանկացած չափերի),
- թաց անձեռոցիկներ,
- շոկոլադե սմայլիկներ - Գրանդ Քենդի, շոկոլադե կոնֆետներ - Kinder (միայն բատոնչիկները, քանի որ երեխաները միայն դա են կարողանում հարմար բռնել),
- խաղալիքներ, փայտյա խաղալիքներ - ձեռքի մկանները զարգացնող (մոտորիկա) **(պլաստիլինները, ալերգիկ երևույթները բացառելու նպատակով փափուկ խաղալիքներ չեն ընդունվում),**
- տոնածառի խաղալիքներ,

Մանկատունը օգնում է նաև անապահով ընտանիքներին, ուստի կարող եք ուղարկել նաև հետևյալ իրերը՝

- աթոռակ, մանեժ, քայլակ (կարող է լինել օգտագործված),
- մանկական հագուստ:

Մանկատունը գտնվում է Նորք-Մարաշ

վարչական շրջանում:

Փաստաբանների պալատից կամավորների խումբը մեկնելու է 2022թ. դեկտեմբերի 23-ին՝ ժամը 16:30-ին: Եթե ցանկանում եք նաև մանկատուն այցելել, ապա խնդրում ենք նախապես տեղեկացնել:

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ

ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })